ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

« » _____ 2015թ.
N: _____

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի սպաներ, ենթասպաներ.

Սիրելի զինվորներ.

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Հայոց ազգային բանակի կազմավորման 23-րդ տարեդարձի կապակցությամբ: 23 տարի առաջ մեր պետության ու ազգի համար ստեղծվեց ամենակարևոր կառույցներից մեկը՝ Հայաստանի զինված ուժերը: Պատերազմի բովում ձևավորված Հայոց Բանակն այսօր տարածաշրջանում ամենամարտունակ և կազմակերպված բանակն է, իբրև ազգային ինքնագիտակցության և արժանապատվության փայլուն դրսևորում: Մենք գլուխ ենք խոնհարում Հայրենիքի սահմանները պաշտպանելու ժամանակ զոհված բոլոր զինծառայողների և ազատամարտիկների շիրիմների առջև:

Հավերժ փառք նրանց անմոռաց հիշատակին:

Այս տոնական օրը զինված ուժերի ողջ անձնակազմին՝ շարքայինից մինչև գեներալ, մաղթում եմ քաջառողջություն, խաղաղություն, իսկ մեր զինվորներին՝ բարի ծառայություն և հաջողություններ ռազմական արվեստի յուրացման գործում:

Հարգանքով՝

Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆ